ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԾՎԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2020թ-ի N29-Ա

Լսեցին:2. Արծվանիստ համայնքի վարչական տարածքում նոր վերահաղորդիչ կայան կառուցելու համար համաձայնություն տալու մասին:

Զեկուցող՝ Ս. Օհանյան

Արտահայտվեցին՝ Ա. Դավթյան և Ս. Ադամյան

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արծվանիստ համայնքի բնակիչներից պարբերաբար ստանում էինք բողոքներ՝ համայնքի որոշ հատվածներում հեռուստաալիքների ընդունման վատ որակի վերաբերյալ և մասնագետների կողմից ս/թ հուլիսի 8-ին համայնքի տարածքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ անհրաժեշտ է համայնքի տվյալ հատվածում հեռուստաալիքների հեռարձակման որակը բարելավելու համար տեղադրել նոր վերահաղորդիչ կայան: Ուստի ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով Արծվանիստ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1.Տալ համաձայնություն Արծվանիստ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, չօգտագործվող տարածքից անհատույց տրամադրել 100ք/մ հողատարածք <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> փակ բաժնետիրական ընկերությանը նոր վերահաղորդիչ կայան կառուցելու համար;